

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԳՍՏՄ. ԱՄԵՐԻԿԱԼԱՅ ԳՍՂԱԲ. ԿՈՒՍՏԱՆՈՒԹԵԱՆՑ (1890-1925). Գրեց՝ Մաուուի Գ. Ճիզմենևոս. Տպգր. Եւր Օրշի Ֆելզեօ, 1930:

Այս երկասիրութիւնը ութսուտ 572 էջեր լեցընող ստուար հատար մըն է: Գիրքը կը բացուի հեղինակին «Երկու Խօսք» արտոգոտուած յառաջաբանովը որ կը գրաւէ ութ անջատ էջեր. եւ ուր ան՝ բանի մը բառերով, կը ներկայացնէ Հայկական Հարցին ծագումը եւ անխուսափելիութիւնը, անոր ընդլայնումը եւ անյաջող վերջաւորութիւնը. կարգ մը ներքին եւ արտաքին պատճառներով. ու այդ հարցին լուծման ճամբուն վրայ Ամերիկահայոց ունեցած աշխատութիւնները եւ զոհողութիւնները. եւ ինք՝ (հեղինակը) իբր մտաւն ծանօթ ու խառնուած Ամերիկայի մէջ կատարուած ազատագրական շարժումներու եւ կուսակցական գործունէութիւններու, փափարը ունեցած է զրի առնել իր յիշատակները եւ հետուէն ու մտաւն իր սեսածներն ու լուծները: Հեղինակը՝ իր իսկ խօստովանութեամբ, յաւակնութիւնը չունի այդ նիւթերու շուրջ կատարեալ գործ մը պատրաստած ըլլալու. այլ աւելի իր գործը կը համարի լոկ այդ ուղղութեամբ կատարուելիք աշխատութիւններու նախափորձ մը:

Այս առիթով կը թուէ բոլոր այն աղբիւրները որոնց զիմած է իր յայտնութիւնները վաւերական եւ ճշգրիտ ընելու համար: Բուն գիրքը կը պարունակէ երեք մասեր ու վերջաբան մը:

Այս ընդարձակ գործին մէջ մեծ չափով պահուած է ժամանակագրական կարգը, որ էական պայմանն է պատմական աշխատասիրութեան մը. բայց ղէպերնու ներկայացումին ու վերլուծումին մէջ կը պակսին չեզոք դատողութիւնը եւ անզգած արամարանութիւնը, որով գործը, իր ամբողջութեան մէջ, կարծես պատմական զետեղէն կը փոխադրուի բըննադատականի կալուածին մէջ, որով կը կորսնցնէ չեզոք եւ անաչառ վիագոյի հանգամանքը որ պատմութիւնը գրելու համար է՛ն կարեւոր բանն է: Կըրնայ ըլլալ որ մենք ալ հեղինակին համակարծիք ըլլանք, իր գնահատութիւններուն եւ եզրակացութիւններուն մէջ. բայց աս պատճառ մը չի կրնար ըլլալ որ փորձուինք իր գործը նկատել հետուա պատմական ճշգրիտ խուզարկութեան եւ ուսումնասիրութեան մը արդիւնք ըլլալէ: Անուշա կարելի չէր, մեր ներկայ պայմաններուն մէջ, հեղինակէն սպասել պատմագրոյի այս ուղիղ կեցումը, որովհետեւ ինքն ալ՝ իբր որոշ կուսակցութեան մը պատկանող մէկը, խառնուած է այդ իրադարձութիւններու, եւ իբր այն՝ ունեցած է իր բախումներն, իր կիրքերն եւ իր նախասիրութիւններն հանդէպ իրենինէն օտար խմբաւորումներու որոնք նախապաշարունակներու եւ կանխակալ կարծիքներու ուժը պիտի առնէին իր մէջ, մանաւանդ երբ զեռ հրապարակին վրայ գոյութիւն ունին այդ խմբաւորումները, խրաբանչիւրը

իր սեպհական կիրքերովը զինուած ղէմ ղէմի: Յայտնի է որ զեռ ժամանակը եկած չէ, մեր բմբռնած ձեւով՝ այդ հարցը պատմութեան մը առարկան դարձնելու: Եւ արդէն կը թուի թէ հեղինակին նպատակը եղած է ո՛չ թէ պատմութիւն մը գրել, այլ իր անձնական յիշատակները եւ սպաւորութիւնները պատմել Հայ Ազատագրութեան դատին նուիրուած այդ ջանքերու մասին: Եւ այս հասկացողութեամբ ինծի համար աւելի ճիշդ պիտի ըլլար գիրքը կոչել «Յիշատակներ եւ սպաւորութիւններ Ամերիկահայ Գաղափ. - Կուսակցական Գործունէութիւններու», եւ այս ա՛յնքան աւելի ճիշդ պիտի ըլլար բանի որ Ամերիկայի մէջ Հայ Գաղ. կուսակցութիւն չէ ստեղծուած ընտ. օտարամուտ ապրանքներ եղած են անոնք հոն. պարզապէս Ամերիկան եւ Ամերիկահայութիւնը ընտրած ըլլալով իբրեւ մշակութեան զետեղ իրենց համար, ինչպէս արտասահմանի ուրիշ զաղութիւնը:

Հեղինակը՝ թէ եւ Ամերիկահայոց կուսակցական գործունէութիւնը առած է իբրեւ իր գիրքին անմիջական առարկայ, բայց ղէպերնու իրերահիւս խառնուածքովը հարկադրուել է պատմել Հայկական Հարցին զիմայեղութիւնները. անոր տարածումը եւ յարակից ղէպերը որ որ անոնք երեւան եկած են:

Տիար Մ. Ճիզմենևանի գիրքը սակայն ունի իր մեծ առաւելութիւնները եւ գնահատելի կողմերը: Նախ պատկեր մըն է ան Հայկական Հարցին բովանդակութեան, սկիզբէն մինչեւ ընդհանուր պատերազմի վերջերը. երկրորդ՝ շատ մը տխուր իրողութիւններու հետ կը շեշտէ հայ ժողովուրդին եւ մասնաւորապէս համեստ դատակարգներուն անվերապահ հայրենասիրութեան, ազգասիրութեան, զոհողութեան եւ նուիրումի ոգին զոր ի յայտ բերած են սագնապի օրերուն, նաեւ կուսակցական շարքերու մէջ ու անոնցմէ դուրս, պարզ ու խոնարհ հողիներու մէջ երկրան եկած հերոսութիւններն ու զիւցանութիւնները որոնք մեր ցեղին ազնուական խորքը կը պատկերացնեն. թանկագին արժէքներ որ ինքնին բաւական պիտի ըլլային մեր ազատագրութիւնը շինելու, եթէ այդ դասը վարելու յաւակնող եւ գործին զուխը նետուողներու մէկ կարեւոր մասը բացարձակապէս զուրկ չըլլային անոնց այդ առարկնութիւններէն եւ ոսկիղէն նկարագրէն:

Ամերիկահայ Գաղ. կուսակցութեանց պատմութեան ընթերցումին մեզի պատճառած յուսախարութեանց եւ պատրանքներուն հակառակ՝ անոր մէջ կայ կազդուրիչ եւ առողջ տարր մը որ միտիթարական է մեզի համար, եւ այն է, ինչպէս կ'ըսէի, հայ ժողովուրդին ազնուական կեցումը, կեանքի եւ մահու պայքարի մը մէջ: Տիար Ճիզմենևանի այդ գիրքը մեր տխրամած աչքերը կ'առողէ հայ ժողովուրդի խոնարհ հորիզոնին որուն մէջ արշալոյսի մը բոցերը կը բռնկին որ կը պահէ մեր յայտ այդ ժողովուրդի տեսականութեան համար: Ինչպիսի ծայրահայտ կը կարգատու ի ան. իբր խանդավառող պատկեր մը, անհուատար կոխի մը մէջ ջախջախուած ժողովուրդի մը, որ իր աննախնայ պարտութեան մէջ իսկ զիտէ իր զուխը վեր բռնել:

Գ. ՄԻԱԼԵԱՆ